

## MASTEREMACO N 900 (EMACO 90)

Դարձունակ (тиксотропический) միաբաղադրիչ հարթիչ (выравнивающий) խառնուրդ է, բարձր հարակցմամբ (ադիեզիայով), որն ապահովում է բետոնային ավարտական հարթ մակերևույթ



### Նկարագրություն

**MASTEREMACO N 900**-ը ցեմենտային հիմքով, պոլիմերներով ամրացված միաբաղադրիչ նյութ է: Ջուր ավելացնելով՝ ստացվում է բարձր հարակցմամբ (ադիեզիայով) դարձունակ (тиксотропический) շաղախ՝ բետոնե և սվաղային մակերևույթները պատելու համար:

### Կիրառման ոլորտ

- բետոնե մակերևույթների վերանորոգում և վերջնամշակում,
- էպօքսիդային և պոլիուրետանային պատվածքներից առաջ՝ հարթ և ջրամեկուսիչ մակերևույթ ստանալու համար,
- հախճասալ (кафель) շարելուց և ներկելուց առաջ հարթ և ջրամեկուսիչ մակերևույթ ստանալու համար,
- բետոնի կառուցվածքային վերանորոգումից հետո, վերջինիս պատումը շաղախով՝ հարթ մակերևույթ ստանալու համար:

### Առավելություններ

- հեշտությամբ պատվում է,
- ունի բարձր հարակցում (ադիեզիա) բետոնե և սվաղային մակերևույթների նկատմամբ,
- ունի բարձր դարձունակություն (тиксотропия), ինչը թույլ է տալիս օգտագործել նյութը որպես ավարտական պատում,
- կայուն է ջերմաստիճանի պարբերական տատանումների նկատմամբ,
- չի ճաքճքում մեծ մակերևույթներ պատելիս:

### Մոտավոր ծախս

1մմ պատման հաստության դեպքում 1.72 կգ/մ<sup>2</sup>:

### Կիրառման եղանակ

**Հիմնանյութի պատրաստումը՝ MASTEREMACO N 900** նյութով պատվելիք մակերևույթը պետք է հնարավորինս լինի հարթ և մաքուր: Խորհուրդ է տրվում հանգամանորեն մաքրել մեքենաների յուղերից, ճարպերից, փոշուց, բետոնի վուլկանացման նյութերից, լցվածքի (заливка) արդյունքում առաջացած քիմիական ազդակներից և շղթայակցումը վատթարացնող մնացած այլ կեղտերից: Մակերևույթի վնասվածքները (խորը ճաքեր, խոշոր փոսեր և այլն) անհրաժեշտ է նախապես վերանորոգել կապիտալ վերանորոգման համար նախատեսված նյութերով՝ ինչպիսիք են **MASTEREMACO S 488**-ը կամ **MASTEREMACO S 88**-ը: **MASTEREMACO N 900**-ի պատման համար նախապատրաստած հիմքը պետք է հազեցած լինի ջրով, սակայն դրա մակերևույթին ջուր չպետք է լինի:

**Պատրաստման եղանակը՝** Ջրի անհրաժեշտ քանակը լցվում է մաքուր տարայի մեջ, ինչից հետո դանդաղ ավելացվում է **MASTEREMACO N 900**-ի համապատասխան քանակը: Լուծույթը 4 րոպե անհրաժեշտ է խառնել՝ մինչև համասեռ զանգված ստանալը: Ջանգվածը պետք է թողնել 4 րոպե և նորից խառնել 30 վայրկյան:

### Խառնուրդի հարաբերակցությունը՝

<b>MASTEREMACO N900 (EMACO 90)</b>	<b>1կգ</b>	<b>Փաթեթավորում 25կգ</b>
Ջրի քանակը	0.19լ	4.75լ
Խառնուրդի խտությունը	2.05 կգ/լ	

**Կիրառումը՝ MASTEREMACO N 900**-ը պատվում է պատրաստած մակերևույթի վրա պողպատե ծեփիչի միջոցով: Խառնուրդի սկզբնական պատումից հետո փոքր քանակությամբ ջուր է շաղվում մակերևույթին, որից հետո իրականացվում է մակերևույթի վերջնական մշակումը: Բաց մակերևույթները 24-48 ժամվա ընթացքում պետք է պաշտպանվեն անձրևից, քամուց և այլն:

**Փաթեթավորում**

**MASTEREMACO N 900**-ը թողարկվում է 25կգ-անոց ջրակայուն պարկերով:

**Պահպանման պայմաններ**

- Պահպանել գործարանային փաթեթներով, չոր վայրում  $+5^{\circ}\text{C}$ - $+25^{\circ}\text{C}$  ջերմաստիճանային պայմաններում,
- Խուսափել մաշկի վրա և աչքի մեջ ընկնելուց:

**Տեխնիկական բնութագրեր**

Բաղադրությունը	Հանքային լցանյութեր և պոլիմերներով հագեցված ցեմենտ
Գույնը	Մոխրագույն/սպիտակ
Սեղման ամրությունը` 1 օր 7 օր 28 օր	$>20$ Ն/մմ <sup>2</sup> $>35$ Ն/մմ <sup>2</sup> $>40$ Ն/մմ <sup>2</sup>
Ծռման ամրությունը (28 օր $20^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի դեպքում)	$7.0$ Ն/մմ <sup>2</sup>
Բետոնի հետ հարակցումը` ադիզիան (28 օր)	$>1.0$ Ն/մմ <sup>2</sup>
Պատման հաստությունը (մեկ շերտի)	1-5 մմ
Պատրաստի խառնուրդի հետ աշխատաժամանակը ( $+20^{\circ}\text{C}$ )	45 րոպե
Կապակցման ժամկետը	28 օր